

ժարդ իրեն սեպհական ունեցած իրաւունքին տէրն է ՚ի ընէ անտի, որ վասն կը յուսամ որ՝ քիչ ատենէն այս խնդրոյ հրամանները կուգան ՚Լ. Գոնէն, »

Լին ինչ ժողովն արձակուելու վրայ էր, յաւելցուց խոնարհարար Ս. Պատրիարքն Վսեմ. Վալի Փաշայէն խնդրել որ՝ Լատինաց մեզ տուած երկրորդ զրկանաց եւս յայլում ոչ հաւ ունկնդիր լինին, որ՝ Սիոն լեռան վրայ մեր գերեզմանատան մէջ Լատինք երկու դուռն բացած էին յաւիրաւի, յաւուրս Իզդէթ Փաշայի, փոխանակ թաքաւորական պողոտային վրայ բանալու, և այսպէս չարաչար մեր իրաւանց դպած են, ինչպէս կանխագոյն պատմեցաւ պատմութեանս սկիզբը, և սոյն դատիս համար քանիցս անգամ ալ պաշտօնական կերպիւ Պօլիս գրուած էր :

« Թէեւ, բաւ Վսեմ. Վալի Փաշայն, այդ խնդիրը մեզ հրամայուած ներուռն մէջ չէ, բայց քանի որ այդքան կը թախանձէք, երկու երեք օրէն յետոյ անոր եւս կը նայիմք, այս օրերս ուրիշ ստիպողական գործեր ունիմք, պէտք է որ զանոնք նախ լըմնցնենք » :

Լյուպէս վերջացաւ երրորդ նիստին ալ :

(Շարունակելի) :

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՔ

Տեղւոյս Մութասարընթ Վսեմ. Ալի Պէյն, այցելութեան եկաւ յառանգաւորաց վարժարանը, ուր ՚ի գիմաց աշակերտաց Տաճկերէն ճաւկարդաց Պօղոս Յակոբեան Չանազ-Վալեյի, և Վսեմ. Այցելուն համառօտ ատենաբանութեամբ իւր գո-

հունակութիւնը յայտնեւէն զինի՝ քաջաբերեց ժառանգաւորները անխոնջ աշխատասիրութեամբ յառաջող լիմել ուսմանց և դիտութեամբ մէջ, յաւելցնելով միանգամայն, որ այս է (Օսմանեան Տէրութեան միակ փաւաքն ու ներկայ Վարչութեան գրեթե յաւոր ջանքը :

Կոստոյցաւ նաեւ իւր անդադ ժամերուն մէջ երբեմն այցելութեան գալ վարժարանը և աշակերտաց տաճկերէն լեզուի ուսմանը նպաստել, թէ ընթերցանութեան և թէ շարադրութեան մէջ, որ և իւր սոյն ուսումն նասիրական խոստման մասին ընդունեց ժամանգաւորաց ջերմ շնորհակալութիւնը Լմենապատիւ Սրբաղան Հօր բերանով :

— Թէեւ Լատինաց խնդիրը անցած տարիէն ՚ի վեր արդէն լրացած էր Ս. Լթուոյս համար, որ այլ եւս պիտի չպատարագեն մեր Ս. Յակոբայ և Ս. Փրկչի վանուց մէջ, բայց տարապարտ յուսով Լատինք այս տարի դարձեալ սկսան խլտիլ, որպէս զի Հոգեգալտեան տօնին կարող լինին գէթ Ս. Փրկչի եկեղեցւոյն մէջ պատարագելը Լյո խլտումը, որ շատ կանուխ և խիստ վարպետ հնարագիւտութեամբ սկսուած էր, այլ ընդ այլոց մեկնութիւններ տալով սոյն ամէն նապարդ խնդրոյն, ապարդիւն եղաւ, և չը յաջողեցան Լատինք իրենց ապօրինի բաղձանայր հասնիլ Լնիրաւութիւնը ճարպիկ դէր մը կ'ուղէր խաղալ և առանց իրաւանց իրաւունք վատակել, բայց փառք Օսմանեան Տէրութեան հայրական արգարտութեանը, որ Հայոց դարաւոր անբընաբարելի իրաւանցը պաշտպան հանդիսացաւ, և չը թողաւ որ նոյն իրաւունքը վտանգուի ՚ի ցաւ սրտի համօրէն լրութեան Լըրիս :